ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև անվտանգ կապուղու մասին» փոխըմբռնման հուշագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ

2021թ. սեպտեմբերի 28-ին Եվրոպոլի գործադիր տնօրենի և ՀՀ ոստիկանության պետի կողմից ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև» աշխատանքային համաձայնագիրը, որը նպատակ ունի ընդլայնել համագործակցությունն անդրազգային հանցավորության դեմ պայքարում, մասնավորապես՝ թմրանյութերի ապօրինի շրջանառության, միգրանտների մաքսանենգության, կիբերհանցավորության, ակտիվների վերականգնման, փողերի լվացման, մարդկանց թրաֆիքինգի և այլ ոլորտներում:

Վերոնշյալ աշխատանքային համաձայնագրի շրջանակներում Եվրոպոլի գործադիր տնօրենի և ՀՀ ներքին գործերի նախարարի կողմից ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև անվտանգ կապուղու մասին» փոխըմբռնման հուշագիրը, որը հնարավորություն կընձեռի Եվրոպոլի և ՀՀ իրավապահ մարմինների միջև տեղեկությունների փոխանակման համար ստեղծել անվտանգ կապուղի:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև անվտանգ կապուղու մասին» փոխըմբռնման հուշագրի վավերացումը համարում է նպատակահարմար:

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ**

«21»____02_____2024թ.